ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա և Աշոցք համայնքների 10 բնակավայրում
մեդիա և թվային անվտանգության վերաբերյալ

2023թ.

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Քաղաքացիական հասարակության ֆորումի
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ

Funded by European Union

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա և Աշոցք համայնքների 10 բնակավայրում
մեդիա և թվային անվտանգության վերաբերյալ

Այս հետազոտությունն իրականացվում է «ԽորանԱրդ» ինտելեկտուալ կենտրոն հասարակական կազմակերպության կողմից, «Մեդիան սարերում» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվել է Արեւելյան գործընկերության (ԱլԳ) Քաղաքացիական հասարակության ֆորումի (ՔՀՖ) Հայաստանի ազգային պլատֆորմ (ՀԱՊ) Քարտուղարություն ՀԿ-ի դրամաշնորհով:

Հետազոտության նպատակն է բացահայտել Շիրակի մարզի Ամասիա և Աշոցք համայնքների երիտասարդների մեդիագրագիտության մասին տեղեկացվածության մակարդակը և շարունակական կրթության անհրաժեշտությունը տվյալ համայնքների 10 բնակավայրերում հետազոտություն իրականացնելու միջոցով:

Հետազոտության բովանդակության համար պատասխանատու է «ԽորանԱրդ» ինտելեկտուալ կենտրոն հասարակական կազմակերպությունը:

Հետազոտության ղեկավար՝
Լուիզա Զաքեյան

Հոկտեմբեր, 2023

ՆԱԽԱԲԱՆ

Ժամանակակից կյանքում մարդկությունն ապրում է մեդիայով հագեցած սոցիալական միջավայրում, որտեղ մեդիան պարզապես տեղեկատվության տարածման միջոց չէ, այլև ձևավորում է հասարակական կարծիք, քաղաքական հայացքներ, սոցիալական վարքագիծ, ազդում մարդկանց վարքագծի, ինչպես նաև տրամադրում է նյութեր, որոնցով մարդիկ կերտում են սեփական ինքնությունը՝ որոշումների, աշխարհայացքի և նախասիրությունների վրա հիմնված:

Մեդիա միջավայրում օր-օրի նորությունների և զվարճանքի, նորությունների և քարոզչության միջև սահմանն առավել լղոզված է դառնում, և մեդիան դադարում է միայն տեղեկատվության շրջանառման միջավայր լինելուց: Հետևաբար, մեդիա հաղորդագրությունների ճիշտ վերծանումը ժամանակակից մարդու կարևորագույն հմտություններից պետք է լինի:

Օգտվելով համակարգչի, սմարթֆոնի և ինտերնետի ընձեռած հնարավորություններից, ֆինանսական գործարքների մեծ մասը հնարավոր է կատարել առցանց՝ վճարումներ անել, վարկեր ձևակերպել, ապրանք գնել ու վաճառել առանց տնից դուրս գալու: Տեխնոլոգիապես արագ զարգացող կյանքում բազմաթիվ խնդիրների լուծումն իսկապես հեշտացել ու հեշտանում է, սակայն դրան զուգահեռ արագ զարգանում են նաև տեխնոլոգիական հանցավոր գործիքներով հանցավոր դրսևորումները: Օնլայն տիրույթում շարունակում են աճել զեղծարարությունների թիվը: Վերջին տարիներին Ոստիկանությունում քաղաքացիներից ստացվում են խարդախությունների վերաբերյալ մտահոգիչ քանակի ահազանգեր ու հաղորդումներ: Միայն 2021 թվականին շուրջ 140 քրեական գործ է հարուցվել խարդախությամբ ուրիշի անունով առցանց վարկեր ստանալու համար: Բազմաթիվ են քարտերից գումարներ կորզելու հաջողված ու անհաջող փորձերը:

Երեխաներն ու երիտասարդները սկսել են ավելի ու ավելի շատ ժամանակ անցկացնել թվային աշխարհում, ուրեմն ավելի ու ավելի են շատանում վտանգները ու ավելի հրատապ է դարձել երեխաներին ու երիտասարդներին, ինչպես նաև նրանց ծնողներին, այդ վտանգների մասին ու դրանցից պաշտպանվելու մեխանիզմների մասին իրազեկելը:

Մեդիագրագետ երիտասարդությունն իրավագիտակից հասարակության գրավականն է:

Այդ իսկ պատճառով արդիական է դառնում ցանկացած տեղեկատվություն ընտրելու, վերլուծելու և ճիշտ գնահատելու ունակությունը:

Մեթոդաբանություն

- Տվյալների հավաքագրման ձևը՝ տնային տնտեսությունների (տ/տ) ներկայացուցչական հարցում՝ դեմ առ դեմ սկզբունքով՝ 115 հոգու միջև:
- Ընտրանքի առաջնային միավորներն ընտրվել են Ամասիա և Աշոցք միավորված համայքների 10 բնակավայրերը:
- Տվյալների հավաքագրման ժամանակահատվածը՝ սեպտեմբեր 14-28, 2023թ:
- Տ/տ պատահական ընտրանք յուրաքանչյուր կլաստերում:
- Հետազոտության համար կիրառվել է քվոտային ընտրանք՝ տվյալների 95% ճշտությամբ:
- Սահմանային սխալի գործակիցը՝ 9%:
- Անկեղծության մակարդակ՝ 95%:

Ծանոթագրություն.

Բոլոր գծապատկերներում ներկայացված են համամասնությունները տոկոսներով ամբողջի մեջ, (եթե այլ նշում չկա):

Արդյունքներն ըստ հարցման

Հարցվողների քանակն՝ ըստ բնակավայրերի

Բնակավայրի անվանումը	Հարցվողների քանակը	Տոկոսային համամասնություն
Ամասիա	21	18,3%
Արեգնադեմ	10	8,7%
Գտաշեն	10	8,7%
Ողջի	10	8,7%
Բյուրակն	10	8,7%
Ջրաձոր	10	8,7%
Աշոցք	12	10,4%
Ղազանչի	9	7,8%
Թորոսգյուղ	10	8,7%
Մեծ Սեպասար	10	8,7%

Հարցվողների ժողովրդագրական բաշխումն՝ ըստ սեռի



Հարցվողների ժողովրդագրական բաշխումն՝ ըստ տարիքի



Հիմնականում ի՞նչ աղբյուրներից եք ստանում տեղեկատվություն



Որքանո՞վ եք վստահում այն աղբյուրներին, որտեղից ստանում եք տեղեկատվություն



Տեղեկատվություն կարդալիս վստա՞հ եք, որ կարող եք տարբերակել կասկածելի, կեղծ, ապակողմնորոշող տեղեկատվությունը



Թվարկել 3 լրատվական կայք, որոնք համարում եք վստահելի

Լրատվական կայքի անվանումը	Հոգի	%
Շանթ ՀԸ, shantnews.am	35	30,4%
Հանրային հեռուստաընկերություն	35	30,4%
Արմենիա	33	28,7%
Կենտրոն ՀԸ	9	7,8%
Ցայգ ՀՌԸ	7	6,1%
5-րդ ալիք	2	1,7%
Շողակաթ ՀԸ	1	0,9%
Azatutyun.am	32	27,8%
News.am	27	23,4%
Mamul.am	14	12,2%
Տելեգրամյան ալիքներ	9	7,8%
Iravaban.net	7	1,7%
Lurer.com	6	5,2%
Ֆեյսբուքի և/կամ ինստագրամի առաջարկած լրահոս	6	5,2%
Hraparak.am	4	3,5%
1in.am	4	3,5%
Hetq.am	3	2,6%
Tert.am	3	2,6%
Պաշտոնական կայքեր	3	2,6%
Yerkirmedia.am	2	1,7%
Armlur.am	2	1,7%
Media.am	2	1,7%
24news.am	2	1,7%
Kizaket.am	2	1,7%
Civilnet.am	2	1,7%
Ֆեյսբուքյան անհատ օգտատերեր	2	1,7%
Armenpress.am	1	0,9%
Asparez.am	1	0,9%
Aravot.am	1	0,9%
Mil.am	1	0,9%
Galatv.am	1	0,9%
Blognews.am	1	0,9%
Panarmenian.net	1	0,9%
Shamshyan.com	1	0,9%
168.am	1	0,9%
Hayeli.am	1	0,9%
Radar.am	1	0,9%
Հանրային ռադիո	1	0,9%
Դժվարանում եմ պատասխանել	1	0,9%
Չեմ վստահում	8	6,9%

Առաջին գործողությունը, որն անում եք կասկածելի տեղեկատվությունը ստուգելու համար



Երբևէ զոհ դարձե՞լ եք առցանց խաբեությունների

«Այո» պատասխանն են տվել 10 հոգի, կամ հարցվողների 8,7%-ը, «ոչ» պատասխանն են տվել են 105, կամ հարցվողների 91,3 %-ը:



Ինչպիսի՞ խաբեության եք բախվել հարցին պատասխանել են խաբեության զոհ դարձած կամ իրեն խաբեության զոհ համարող 10 մասնակից:

Ստորև ներկայացվում են հարցվողների պատասխանները խմբագրված տեսքով.

- *Գումար աշխատելու հայտարարություն էին տվել: Գումար էին պահանջում մուտքագրման համար, բայց իրականում միայն իմ մուտքագրած գումարը կորցրեցի:*
- *Իբր գործնական առաջարկ, բայց խաբեություն էր:*
- *Կեղծ ինֆորմացիա կեղծ լրատվականի կողմից: Նյութով կիսվել էի էջումս, պարզվեց կեղծ էր և «հիմար» վիճակում հայտվեցի:*
- *Ամեն օր առցանց խաբեության եմ բախվում, երբ ստանում եմ տարբեր տեսակի կեղծ տեղեկատվություններ:*
- *Առցանց գնումների ժամանակ, երբ իմ վճարած գումարը չեն վերադարձրել:*
- *Առցանց առևտրի զոհ: Կատարել եմ առցանց գնում, բայց պարզվեց խաբվել եմ:*
- *Tellcell wallet-ի օնլայն խաբեության զոհ է դարձել:*
- *Էլեկտրոնային հասցեիս նամակ էր եկել, իբր ժառանգություն եմ ստացել հեռավոր բարեկամից, հաշվեհամար էին ուզում, ու որ ես նախապես որոշակի գումար պետք է փոխանցեի իրենց որոշակի գործարքներ իրականացնելու համար:*
- *Սխալ դեղատոմսերի գովազդներ, հրապարակումներ, ինչպես նաև քաղաքական խաղեր, կեղծ տեղեկատվություն: Մեծամասամբ քաղաքականության հետ կապված կեղծ լուրեր:*
- *Ֆեյսբուքյան էջս կոտրել են:*

Ձեր շրջապատում ճանաչու՞մ եք մարդկանց, ովքեր առցանց խաբեության զոհ են դարձել:

«Այո» պատասխանն են տվել 20 հոգի, կամ հարցվողների 17,4%-ը, «Ոչ» պատասխանել են 95 հոգի, կամ հարցվողների 82,6%-ը:



Ինչպիսի՞ խաբեության զոհ են դարձել Ձեր շրջապատի մարդիկ հարցին պատասխանել են 20 մասնակից:

Ստորև ներկայացվում են հարցվողների պատասխանները խմբագրված տեսքով.

- *Կեղծ լուրեր, կեղծ վերնագրեր, բացում են նյութը լրիվ այլ հոդված է բերում:*
- *Հիմնականում ապատեղեկատվության տարածում:*
- *Քաղաքական քաղաքականության և կեղծ դեղատոմսերի հետ կապված:*
- *Դեղերի վաճառք, որոնք իրականում անօգուտ են:*
- *Ֆեյսբուքյան ֆեյք էջերով պաշտոնյաների մահվան լուրեր և այլն:*
- *Շանտաժի են ենթարկել, գումար պահանջել, վերջինս էլ տվել էր:*
- *Գումարի շորթում:*
- *Գումար են կորզել վարք ձևակերպելու պատրվակով:*
- *Առցանց պատվեր է արել, չի եկել պատվերը, գումարը հետ չեն փոխանցել ու պրոֆիլը ջնջել են:*
- *Առցանց գնումների ժամանակ, ապրանքը չեն ուղարկել ու գումարը հետ չեն վերադարձրել:*
- *Առցանց գնումներ անելիս, երբ սխալ ուղարկած ապրանքի հետադարձի համար գումար են պահանջել-պահել:*
- *Կրիպտոարժույթ. ֆինանսական զոհություն:*
- *Օնլայն առևտրի ժամանակ հաշվեհամարից հարկ եղածից ավելի գումարի գանձում:*
- *Բանկային հաշվից անօրինական կերպով գումարի գանձում:*
- *Օնլայն գնումների ժամանակ խաբեություններ:*
- *Հակերային հարձակումների, մանիպուլացնող տեղեկատվական ինֆորմացիայի հետ կապված խաբեություններ:*
- *Ներկայացել են ուրիշի անունից ու շփում են ստեղծել:*
- *Կատարել է պատվեր, փողը փոխանցել է, բայց խաբել էին ու պատվերը չեն ուղարկել:*
- *Գազպրոմի կողմից սովորեցնում են գումար վաստակել արժեթղթերի և կրիպտո շուկաներում, բայց քարտից մեծ գումար էին քաշել, այդպես էլ չկարողացավ հետ բերել:*
- *Դեղորայքի ակցիա, իբր անվճար բայց մեծ գումար են գանձել օնլայն:*

Սոցիալական ցանցերում Ձեր օգտահաշիվները պաշտպանելու համար արդյո՞ք ակտիվացրել եք երկփուլային անվտանգությունը



Երբևէ մասնակցե՞լ եք մեդիագրագիտության դասընթացների

«Այո» պատասխան տվել է հարցվողներից 19 հոգի:



Նշել՝ ի՞նչ ծրագրի շրջանակներում եք մասնակցել մեդիագրագիտության դասընթացների:

- ✓ *ԵՀՀ, Եվրասիա համագործակցության հիմնադրամի կողմից կազմակերպած քննադատական մտածողություն, փաստերի ստուգում,-1,*
- ✓ *Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 2 հոգի,*
- ✓ *Սախարովի անվան ՄԻՊ հայկական կենտրոնի Շիրակի մասնաճյուղ, ՔՀԿ ուսուցում, Մեդիագրագիտություն,*
- ✓ *«Ասպարեզ» ակումբի մեդիագրագիտության, տվյալների անվտանգության, սեմինարներ-2 հոգի,*
- ✓ *«ԽորանԱրդ» ինտելեկտուալ կենտրոն ՀԿ -2 հոգի,*
- ✓ *WorldVision կազմակերպած մեդիագրագիտության դասընթացների շրջանակում-4 հոգի,*
- ✓ *ԿԻՏ, Կանանց իրավունքների տուն ՀԿ-ի կողմից կազմակերպված դասընթացի շրջանակներում,*
- ✓ *Sensible Generation ՀԿ-ն Creative Culture Tour,*
- ✓ *Civil Youth Center և Freedom House-ի հետ միասին կազմակերպել էր երկօրյա դասընթաց «Երիտասարդներն ապատեղեկատվության դեմ պայքարում» թեմայով,*
- ✓ *Ուսուցողական ճամբարի շրջանակում, Մեդիագրագիտություն,*
- ✓ *«Ռեստարտի Գյումրի» նախաձեռնությունների ՀԿ, «Երիտասարդ դեսպաններ» ծրագրի շրջանակներում մեդիագրագիտություն,*
- ✓ *Մեդիագրագիտություն և անվտանգություն, անձնական տվյալների պաշտպանություն, կազմակերպությունը չեմ հիշում-2 հոգի:*

Հարցվողների ժողովրդագրական բաշխումն՝ ըստ զբաղվածության



Հարցվողների ժողովրդագրական բաշխումն՝ ըստ կրթության



Ամփոփում

Ամփոփելով Ամասիա և Աշոցք միավորված համայնքների բնակավայրերում անցկացված մեդիագրագիտության վերաբերյալ հետազոտությունների արդյունքները՝ պարզ է դառնում, որ ընտրված բնակավայրերի համար տեղեկատվության հիմնական աղբյուրներն են հեռուստատեսությունն ու համացանցը։

Հետազոտությանը մասնակցել են 16-55 տարեկան 115 անձ, հիմնական շեշտադրումն արվել է 16-34 տարիքային խմբին։ Հարցվողների 58%-ից ավելին վստահում են տեղեկատվական աղբյուրներին, որոնց հետևում են։

Ամփոփման ընթացքում պարզ են դարձել հինգ ամենավստահելի աղբյուրներն ըստ հարցվողների՝ Շանթ ՀԸ, Հանրային ՀԸ, Արմենիա ՀԸ, Ազատություն ռադիոկայան և News.am կայքը։

Հարցվողների 73% լիովին վստահ է կամ վստահ է, որ կարող է տեղեկատվությունը կարդալիս տարբերակել կասկածելի, կեղծ, ապակողմնորոշող տեղեկատվությունը, նրանցից մոտավորապես 63%-ը նաև նշել է, որ կասկածելի տեղեկատվության հանդիպելու ժամանակ այլ կայքերով կստուգի տեղեկատվությունը կամ կփնտրի նյութի սկզբնաղբյուրը։ 23%-ը նշել է, որ չի ստուգում, ինչպես նաև հնչել են պատասխաններ, որ նյութի հավաստիությունը ստուգելու համար կփորձեն պարզել ծանոթ-բարեկամների, երեխաների միջոցով։

Առցանց խաբեությունների զոհ դարձել եք *(«Այո» պատասխանն են տվել 10 հոգի, կամ հարցվողների 8,7%-ը, «ոչ» պատասխանն են տվել են 105, կամ հարցվողների 91,3 %-ը*) կամ ճանաչում եք ձեր շրջապատում նման մարդկանց (*«Այո» պատասխանն են տվել 20 հոգի, կամ հարցվողների 17,4%-ը, «Ոչ» պատասխանել են 95 հոգի, կամ հարցվողների 82,6%-ը/*) հարցերի պատասխաններից կարելի է ենթադրել, որ հիմնականում մարդիկ առցանց խաբեությունների են բախվում առցանց զնումների, տարատեսակ ակցիաների, աշխատանքային հայտարարությունների, սոց.ցանցերում այլ անձ ներկայացող/կեղծ պրոֆիլով հանդես եկողների կողմից տեղեկատվության կորզման ու անձնական շփման, շանտաժի ենթարկման, կրիպտոարժույթների շուկայում գումար կորցնելու, անձնական էջերի կոտրման ժամանակ։ Հարցվողներից երկուսն առանձնացրել են, որ առցանց խաբեություն են համարում անգամ կեղծ տեղեկատվության տարածումն ու մանիպուլյացիաները, վարքերի ձևակերպման նպատակով գումարի կորզումը, բանկային հաշվից անօրինական ճանապարհով գումարի հափշտակումը։

Հիմնականում երիտասարդության շրջանում սոցիալական ցանցերում օգտահաշիվները պաշտպանելու համար ակտիվացված է երկփուլային անվտանգության համակարգը։

Մեդիագրագիտության, թվային անվտանգություն, փաստերի ստուգման, անձնական տվյալների պաշտպանության թեմաներով դասընթացներին մասնակցել են հարցվողներից 19 հոգի, որոնցից 10-ը՝ Ամասիայից, 4-ը՝ Թորոսգյուղից, 3-ը՝ Աշոցքից, 1-ը՝ Մեծ Սեպասարից, 1-ը՝ Բյուրակնից։

Ամասիայում՝ հենց տեղում, մինչև լուծարումը երիտասարդների հետ աշխատանք է տարել WorldVision Հայաստան կազմակերպությունը, հարցվողների բարձր մասնակցությունն էլ այդ մասին է վկայում: Համայքներում աշխատել են նաև Սախարովի անվան ՄԻՊ հայկական կենտրոնի Շիրակի մասնաճյուղը, «Ասպարեզ» ակումբը, «ԽորանԱրդ» ինտելեկտուալ կենտրոն ՀԿ-ն:

Հարցվողներից մի քանիսն էլ մասնակցել են դասընթացների ոչ իրենց բնակավայրերում. նման դասընթացներ կազմակերպվել են Եվրասիա համագործակցության հիմնադրամի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի, Կանանց իրավունքների տուն ՀԿ-ի, Sensible Generation ՀԿ-ն Creative Culture Tour, Civil Youth Center և Freedom House-ի հետ միասին, «Ռեստարտի Գյումրի» նախաձեռնությունների ՀԿ-ի կողմից:

<u>Առաջարկություններ</u>

- Բնակչության շրջանում բարձրացնել մեդիագրագիտության անհրաժեշտության վերաբերյալ իրազեկվածությունը:
- Մեդիագրագիտության, թվային անվտանգություն, փաստերի ստուգման, անձնական տվյալների պաշտպանության թեմաներով մատչելի սոցիալական տեսահոլովակների պատրաստում և տարածում սոցիալական ցանցերերի, այդ թվում՝ Տիկտոկ սոցիալական ցանցի միջոցով:
- Մեդիագրագիտությունը դարձնել ժամանակակից կրթության ամենաանհրաժեշտ բաղադրիչներից մեկը:
- Մեդիագրագիտության դասընթացներ կազմակերպել հենց համայնքային բնակավայրերում՝ ապահովելով համայնքի բնակչության մեծաքանակ մասնակցություն:
- Մեդիագրագիտության դասընթացների ժամանակ
    - մասնակիցների մոտ զարգացնել քննադատական մտածողություն, անհատական դիրքորոշում,
    - մասնակիցներին սովորեցնել տարբերակել քարոզչությունն ու ապատեղեկատվությունն օբյեկտիվ տեղեկատվությունից, փաստերի ստուգում,
    - մասնակիցներին տրամադրել վստահելի լրատվամիջոցների առանձնացման միջոցներ, գործիքներ,
    - մասնակիցների մոտ բարձրացնել դիմադրողականությունը մեդիամանիպուլիացիաների նկատմամբ, որպեսզի խուսափեն լրատվամիջոցների, տարատեսակ տեղեկատվության բացասական ազդեցությունից:
    - մասնակիցներին սովորեցնել մեդիա «դիետայի» սահմանում, այսինքն՝ հեռուստատեսության, էլեկտրոնային խաղերի, ֆիլմերի և տարբեր տպագիր լրատվամիջոցների հետ անցկացվող ժամանակի սահմանափակում:

Նշումների համար